ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 1740-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 984-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Բնաիրային օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 958-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 984-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում «ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» բառերը փոխարինել «, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սահմանել՝

1) բնաիրային օգնության տրամադրման կարգը, պայմանները և չափորոշիչները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սննդի կազմակերպման ծառայության մատուցման աջակցության քարտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի։».

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի IV գլխով սահմանված սննդի կազմակերպման ծառայությունների մատուցումն իրականացվում է սույն որոշման N 2 հավելվածով սահմանված աջակցության քարտի տրամադրման միջոցով, որով տրամադրվող գումարի չափը հաշվարկվում է հիմք ընդունելով սույն որոշման N 1 հավելվածի 16-րդ և 30-րդ կետերի չափորոշիչները՝ 1 շահառուի համար՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի շրջանակում։».

4) որոշման հավելվածի վերևի աջ անկյունում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N 1» բառերով.

5) որոշման հավելվածի վերնագրում «ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» բառերը փոխարինել «ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ» բառերով.

6) որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը «նպատակով» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սննդի կազմակերպման ծառայության մատուցման» բառերով.

7) որոշման հավելվածի 5-րդ կետը 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով՝

«2.1) սոցիալական դեպքի վարման շրջանակներում սննդի կազմակերպում հայցող անձին ուղեգրում է (տրամադրում է ուղեգիր կամ աջակցության քարտ՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի համաձայն) սույն հավելվածի 14-րդ կետում նշված կազմակերպություն՝ ծառայություն մատուցելու նպատակով.».

8) որոշման հավելվածի 6-րդ կետը «Յուրաքանչյուր բնաիրային օգնության» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սննդի կազմակերպման ծառայության

ձևի,» բառերով, իսկ «դեպքերի։» բառից հետո լրացնել «Սննդի կազմակերպման ծառայությունը (տաք ճաշ՝ առաջին և երկրորդ կերակրատեսակով, կամ չոր մթերաբաժնի ձևով) իրականացվում է ճաշարանների կողմից։» նախադասությամբ.

9) որոշման հավելվածը III գլխից հետո լրացնել IV գլխով՝ համաձայն N 1 հավելվածի.

10) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Սահմանել, որ սույն որոշման շրջանակներում սննդի կազմակերպման ծառայության համար անհրաժեշտ ծախսերի նախատեսման հնարավորության հարցը ենթակա է քննարկման Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջետային ծախսերի հայտի նախագիծը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացման ժամանակ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ